

Հ րատարակութիւն Կենտրոնական Դրավաճառանոցի.

ԿՐՈՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒՄԱՅ ՈՒՍՈՒՄՆ

ՀԱՅՈՑ ԵՎԵՊԵՑՈՎԱՆ - ՇԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱՐ

ՊԱՏԱԿԵՐԾՈՎՈՐԴ

(Համաձայն Ամենայն Հայոց ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻ ԻՆՔՈՒՑ
հաստատուած ծրադրի)




ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ:

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ ԳԻՒՏ ՔԱՀԱՆԱՑ ԱՂԱՆԵԱՆՑ

Թ. Ի Ֆ Լ. Ի Ս

Տպարան Մալուկա Վարդանեանի

1888



Հրատարակութիւն Կենտրոնական Դրավագառանոցի.

ԿՐՈՆԻ ԳԱՍՏԱԳԻՐԻ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՑ ՈՒՍՈՒՄՆ

ԱՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ

ՀԱՄԱՐ

2(075)

ՊՈՅԵԿԵՐԱՋԱՐԴ

(Համաձայն Ամենայն Հայոց Ահշափող Կոթուղարակութեան
հաստատուած ծրագրի)




ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ:

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ ԳԻՒԺ ՔԱՀԱՆԱՑ ԱԴԱՆԵԱՆՑ

Թ Ի Ֆ Լ Ի Ց

Տպարան Մոլոկ Վարդանեանի

1888



Доз. цензурою, Тифлпсъ, 24 Сентября 1887 г.
Тип. М. Вартанянца, Тройц. пер., д. № 11.

A II
5722

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Կ

Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՉՆՈԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

• 3 •

• 3 •

• 3 •

Ա Զ Դ

ԱՐԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների նոր ծրագիրը նոր պահանջ յառաջացրեց մեր կրօնի դասագրքերի վերաբերմամբ:

Յայտնի է, որ այդ ծրագրով նին և նոր կտակարանի կանոնառ ուսումը աւանդվում է չորրորդ և նինգերորդ տարիներում. իսկ առաջին երեք տարիների համար որոշուած են հատրնտիր աղօրքներ, զիսաւոր տօների բացատրութիւններ և համառուստ բացատրութիւն եկեղեցւոյ խորհուրդների և ս. պատարագի աղօրքների: Մեր ցայսօր նրատարակուած կրօնի դասագրքերից և. ոչ մինը չպարունակելով ծրագրած դասընթացը ամբողջապես՝ զգացվում էր այդ ծրագրին համեմատ կրօնի դասագրքերի կարեւորութիւնը առաջին երեք տարիների համար:

Անա այդ կարիքը ստիպեց ինձ մեռնարկել եռամեայ կրօնի ուսման դասագրքերի պատրաստութեան, որոնցից երկրորդ տարուայ «կրօնի դասագիրք» լոյս եմ ընծայում այժմ:

Թէ որքան յաջողել է ինձ խօսել մանուկների մետ, տօների բացատրութիւնները յարմարացնել մանկական հասակին և հասկացողութեանը, այդ բող որոշեն հայ կրօնուսոյցները, որոնց արդար դատաստանին յանձնում եմ սոյն դասագիրք:

ԳԻՒՏ ՔԱՇԱՆԱՑ ԱՂԱՆԵԱՆՑ

ՅԱՆԿ

ՄԱՍՆ Ա.

Ա Դ Օ Թ Ք Ն Ե Ր

Գոհանամք գքէն Տէր Աստուած մեր
Լուր ձայնից մերոց
Ազք ամենեցուն
Փառք քեզ Տէր, փառք քեզ
Սուրբ ես Տէր Աստուած մեր
Յիշեա Տէր զպաշտօնեայս քո
Խաչ քո եղիցի մեղ ապաւէն:

ՄԱՍՆ Բ.

Տ Օ Ն Ե Ր.

Սուրբ Կոյս Մարիամի աւետումը
Քրիստոսի ծնունդը
Յիսուսին Շտանում են Շտանարը
Քրիստոսի մկրտութիւնը
Յիսուսի քարոզութիւնը, մատնութիւնը, չարչարանքը եւ
թաղումը
Քրիստոսի յարութիւնը
Քրիստոսի համբարձումը
Հոգւոյն Սրբոյ գալուստը
Քրիստոսի սուրբ Խաչի վերացումը
Քրիստոսի սուրբ Խաչի գտնելը:

ՄԱՍՆ Ա

Ա Դ Օ Թ Ք Ն Ե Ր

Ա.

ԱԴՕԹՔ ԱՌԱԽՈՏԵՍԱՆ

Գոհանամբ զքէն, Տէր Աստուած մեր,
որ զարթուցեր զմեղ 'ի հանգատենէ քնոյ
շնորհիւ ողորմութեան քո: Զարթո՛ զմիտս
մեր արդարութեամբ առ քեզ, Տէր Աստուած
մեր, զի տեսցեն աչք մեր զփրկութիւն քո:
Եկեսցէ և ընակեսցի՛ առ մեզ Աստուած
ծութիւն քո, և ողորմութիւն քո հովանի և
պահապան լիցի 'ի վերայ պաշտօնէից քոց:
Եւ զմեղ, զծառայրս քո արժանի արա 'ի
տուէ և 'ի գիշերի և յամենայն ժամու միշտ
խորհիլ 'ի սէր պատուիրանաց քոց: Եւ գո-
հանալով փառաւորել զՆայր և զՈրդի և
զՍուրբ Հոգիդ, այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից. ամէն:

ԱՂՅԹՔ ԵՐԵԿՈՑԵԱՆ

Լուր ձայնից մերոց, Տէր Աստուած
մեր. ընկալ զաղաչանս մեր, զհամբարձումն
'ձեռաց մերոց և զբանս աղօթից, սրբելով
զերեկոյի պատարագս մեր ՚ի հոտ անուշից՝
ի հաճոյս քեզ պատրաստել:

Յաւել ՚ի մեզ, Տէր ամենակալ, զհա-
ւատ, զյոյս, զսէր, և զամենայն գործս ա-
ռաքինութեան. որպէս զի ըստ կամաց քոց
բարեսիրաց՝ միշտ կրօնաւորեալք բարեպաշ-
տութեամբ ՚ի տուէ և ՚ի զիշերի, արժա-
նաւորք եղիցուք յաղագս անձանց մերոց
փրկութեան. և վասն հոգեոր կենացաղա-
չել զքեզ, Տէր, և զտանել ՚ի քէն զշնորհս
և զողորմութիւն. և գոհանալով փառաւո-
րեսցուք զհայր և զՈրդի և զՍուրբ Հո-
գիդ. այժմ և միշտ և յաւիտեանս:

Գ.

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՍԵՂԱՆՈՅ

(Ճաշից առաջ)

Աչք ամենեցուն՝ ՚ի քեզ յուսան, և
դու տաս կերակուր նոցա ՚ի ժամու։ Տաս
դու նոցա և կերակրին, բանաս զձեռն քո
և լցուցանես զամենեսեան քաղցրութեամբ
կամօք քովք։

Դ.

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՍԵՂԱՆՈՅ

(Ճաշից յետոյ)

Փառք քեզ Տէր՝ փառք քեզ, թագաւո՞ր
փառաց, որ ետուր մեզ կերակուր ուրա-
խութեան. և լցուցեր զսիրտս մեր ՚ի
լիութենէ ամենաբաւական ողորմութեան
քո, լցո և այժմ զմեզ հոգւովդ քովարբով.
որպէս զի դացուք առաջի քո հաճոյք, և
մի ամաչեցեալք, զի դու գաս և հատուցա-
նես իւրաքանչիւր ըստ գործս իւր. և քեզ
վայել է փառք իշխանութիւն և պատիւ.
այժմ և միշտ և յաւիտեանս։



Ե.

ԱՂՅԹՔ ԱՌԱԻՈՏԵԱՆ

Սուրբ ես Տէր Աստուած մեր՝ հզօր և
փառաւորեալ. որ նստիս 'ի կառա քերովքէ-
ականս և լոյս ծագես յարարածս քո:
Լուսաւորեա զմեզ Տէր 'ի ժամ առաւո-
տուս. որպէս զի 'ի ծագել լուսոյ տունջե-
անս՝ ծագեսցի առ մեզ գութ մարդասի-
րութեան քոյ: Հեռացո՛ր մէնջ, Տէր, զխա-
բէութիւն սատանայի: և զբոնութիւն նո-
րա խորտակեա աղօթիւք և բարեխօսու-
թեամբ ամենայն սրբոց: Արա և զերկիրս
պտղաբերս 'ի մնունդս ծառայից քոց: Յո-
րոց հանապազ փառաւորեալ գովի ամենա-
սուրբ երրորդութիւնդ. այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Զ.


Ցիշեա Տէր զպաշտօնեայս քո. զձնողմն
մեր. զվարդապետս. զեղբարս. զընկերս. զկե-
րակրիչս. զուխտաւորս. զճանապարհորդս.
զհանգուցիչս. զվաստակաւորս. զխոստովանո-

ղըս. զապաշխարողս. զգերիս. դժիւանդա.
դնեղեալս. դիշխանս. դչարարարս. զբա-
րերարս. դթշնամիս. զատելիս. և որք պա-
տուիրեցին մեղ հաւատով:

Ե.

ՄԱՂԹԱՆՔ ՊԱՀՈՑ

Խաչ քո եղիցի մեղ ապաւէն, Տէր
Յիսուս, յորժամ երեխս փառօք Հօր ընդ
ամպս լուսաւորս: Յայնժամ մեք մի՛ ամա-
չեսցուք յուսացեալքս 'ի քեզ, այլ զօրու-
թեամբ քով մեծաւ՝ բերկրեսցուք ընդ աջմէ
քումմէ որպէս զորդիս լուսոյ և որդիս
տունջեան:



ՄԱՍՆ Բ

Տ Օ Ւ Ե Ր

Ը.

ՍՈՒՐԲ ԿՈՅԾ ՄԱՐԻԱՄԻ ԱԽԵՏՈՒՄԸ

(Դասկ. ա. 26—38)

Մօտ 1900 տարի սորանից առաջ
Աստուծոյ Հրեշտակը Հրէաստանի Գալի-
լիա գաւառի Նազարէթ քաղաքում երևե-
ցաւ մի կոյսի, որ նշանուած էր Դաւթի
ցեղից մի մարդու հետ, որի անունն էր
Յովսէփ. իսկ կուսի անունը Մարիամ
էր: Թէ Մարիամը և թէ Յովսէփը թա-
գաւորական ցեղից էին: Հրեշտակը ասաց
Մարիամին. «Ուրախացի՛ր Բերկրեալդ, Տէրը
քեզ հետ է»: Մարիամը այս խօսքերը որ
լսեց՝ շփոթուեցաւ և մտածում էր թէ ի՞նչ
բանի համար է այս ողջոյնը: Իսկ Հրեշտա-

կը ասաց նորան. «մի՛ վախենար, Մարի-
ամ, որովհետեւ շնորհը դտար Աստծուց
և աչա կը յղանաս և մէկ որդի կը ծնես,
որի անունը Յիսուս կը դնես: Նա մեծ կը
լինի և Բարձրեալի Որդի կասուի և ՏէրԱս-



տուածը կրտայ նորան՝ նրա հայր Դաւ-
թի աթուը, Յակովը տան վերայ յաւիտե-
անս պէտք է թագաւորէ և նորա թագա-
ւորութիւնը վերջ չը պէտքէ ունենայ»: Մա-
րիամը չը հաւատաց հրեշտակի խօսքին,

Հրեշտակը շարունակեց ու ասաց. «Սուրբ
Հոգին կ'իջնի քո վրադ և Բարձրելու
զօրութիւնը հովանի կը լինի քեզ. որով-
հետեւ նա, որ պէտք է ծնուի քեզանից,
սուրբ է և Աստուծոյ որդի կը կոչուի:
Աստուծոյ համար անկարելի բան չը կայ»:
Մարիամը հնազանդուեցաւ Աստուծոյ կամ-
քին, ասելով՝ ես Տիրոջ աղախինն եմ, թող
լինի ինձ ինչպէս որ ասացիր: Եւ հրեշտա-
կը հեռացաւ նորանից:

Այս բանը պատահեցաւ ապրիլ ամսի
7-ին, այդ պատճառով մենք էլ այդ տօնը
կատարում ենք ապրիլի 7-ին:

'Ի պատիւ սուրբ կոյս Մարիամի, որին
ասում ենք նաև Տիրամայր-Աստուծածին,
երգում ենք այս երգը.


Ուրախ լեռ բերկրեալդ, Տէր ընդ
քեզ. օրհնեալ ես դու 'ի կանայս և
օրհնեալ է պտուղ որովայնի քո:

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

(Մատթ. Ա. 18 25. Ղուկ Բ. 1-22)

Մեղանից շատ հեռու մի երկրում
երկու հոգի ճանապարհ էին գնում. այդ
երկիրը դժոնվում է դէպի հարաւ, ուր
աւելի տաք է, քան թէ մեր երկիրը.
որտեղից դալիս են մեր երկիրը երգող
թըռչունները. ուր մեր կողմերից շատերը
ուխտ են գնում և ձեռքերը դրոշմած յետ
են դալիս: Այն երկիրը, ուր նրանք գնում
էին, Հրէաստանն էր, հրէաների աշխարհը.
նոքա գնում էին Բեղդեչէմ քաղաքը:
Բեղդեչէմը մեծ քաղաք չէր. բացի տեղա-
կան բնակիչներից այդ միջոցին այնտեղ հա-
ւաքուել էին մեծ բազմութիւն ուրիշ տե-
ղերից, որոնք եկել էին իրանց անունները
զրել տալու, որովհետեւ հրամայած էր, որ
աշխարհագիր անեն, այն է բոլոր ժողո-
վրդեան ցուցակագրեն: Նոքա ման եկան
ամբողջ քաղաքը և տեղ չը դտան իրանց

բնակութեան համար. ամբողջ քաղաքում
հիւրանոց չկար. որտեղ կարողանային բնակ-
ուել. ուրեմն ի՞նչ պէտքէ անէին. դուրսը մնալ
չէին կարող. մարդկանց բնակարան չկար,



բայց անասունների գոմեր շատ կային.
ահա այդպիսի գոմերից մէկում, որ
շինուած էր մի այրի մէջ, տեղ գտան նոքա
գիշերն անցկացնելու: Այրի մէջ մսուր էլ
կար, խոտ ու դարման էլ անասունների
համար:

Այդ գիշերը միևնոյն այրի մէջ Աստուած նոցա մի սիրուն մանուկ պարզեց: Մանուկին չէին կարող օրօրոցի մէջ պարկեցնել. ով կը տար այնտեղ օրօրոց կամ գեղեցիկ շորեր. նորան փաթաթեցին խանձարուրի մէջ և դրին այն մառւրի մէջ, ուր ոչխարը, հորթը, եղը, կովը և ուրիշ անասուններ խոտ ու դարման էին ուտում: Մանուկը փափուկ անկողին էլ չունէր, այլ պարկած էր դարմանի վերայ: Այս մանուկըն էր Յիսուս Փրկիչը: Մարիամը շատ էր սիրում Յիսուս մանկան. այրը մութն էր, իսկ այն տեղը, ուր մանուկն էր պարկած, լուսաւորուած էր:

Յովսէփն ու Մարիամը իրանց այս ուրախութիւնը սիրով կը պատմէին ուրիշ մարդկանց, եթէ հարևաններ ունենային: Քաղաքի բնակիչները քնած էին. հովիւներն էլ դաշտումն էին. նոքա հսկում էին իրանց հօտերը, որ դազանները չը գողանան գտաները: Ով կարող էր իմացնել նոցա Փրկիչ ծնուելու լուրը: Ահա այդ բանը Աստուած այսպէս կարդագրեց. —մի հրեշ-

տակ յանկարծ երևեցաւ դաշտում գըտ-
նուած հովիւներին. դաշտում բոլորովին
մութն էր, որովհետեւ զիշեր էր. երբ
հրեշտակն երևեցաւ՝ նորա շուրջը լուսաւոր-
ուեցաւ. հովիւները այդ բանի վերայ խիստ
վախեցան. հրեշտակն ասաց նոցա. մի
վախենաք, մեծ ուրախութիւն եմ աւետում
ձեզ, որ բոլոր ազգերին էլ պատկանում է.
որովհետեւ այսօր ձեզ Փրկիչ ծնուեցաւ, որ
է Յիսուս Քրիստոս. դուք կը զանէք
մանկանը խանձարուրի մէջ փաթըթած, և
մսուրի մէջ դրած։ Յետոյ յանկարծ այդ
հրեշտակի մօտ եկան ուրիշ շատ հրեշտակներ,
որոնք փառաբանում էին Աստծուն և ա-
սում. «Փառք ՚ի բարձունս Աստուծոյ և
յերկիր խաղաղութիւն ՚ի մարդիկ հաճու-
թիւն»։

2. Երբ հրեշտակները հեռացան՝
հովիւները ասացին մէկմէկու. եկէք զնանք
Բեղղեշէմքաղաքը և պարտենք մանկանը,
որի մասին հրեշտակը մեզ յայտնեց. Նո-
քան թողին իրանց հօտերը և շտապով

գնացին պտրտելու մանկան. և հրեշտակի տուած նշանի համեմատ գտան այրը. տեսան այնտեղ մանկան խանձարուրով պատած և մոռորի մէջ դրած. տեսան նաև Յովսէփին ու Մարիամին. Երկրպագեցին Փրկչին և պատմեցին, թէ ինչպէս հրեշտակը երեւեցաւ նոցա և այն ամենը, ինչ որ տեսել էին ու լսել:

Հովիւները էլ չը մնացին Փրկչի մօտ. այլ յետ դարձան դաշտը իրանց ոչխարների մօտ. փառարանում էին Աստուծուն, որ նա Փրկիչ է տուել իրանց և պատմում էին այդ բանը ամենքին:

Ինչպէս որ Հովիւները ուրախ էին Փրկչի ծնուելու վերայ, այնպէս էլ մենք ուրախանում ենք ամեն տարի յունվարի 6-ին, երբ հանդիսով տօնում ենք Փրկչի ծնունդը և երգում ենք այս շարականը.—

Խորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ. Հովիւք երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ ՚ի Բեղ-
ղեհէմ քաղաքի. որդիք մարդկան
օրհնեցէք, զի վասն մեր մարմնա-
ցաւ:

Ճ.

ՅԻՍՈՒՍԻՆ ՏԱՆՈՒՄ ԵՆ ՏԱՅԱՐԸ—ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶ

(Ղուկ թ. 22-40)

Յիսուսի ծնուելուց բառասուն օր
յետոյ ծնողները տարան Նորան Երու-
սաղէմ:

Հրէաների մէջ սովորութիւն կար,
որ քառասուն օրուան երեխային տանում էին
տաճարը, նուփիրում էին Աստծոն և միւնոյն
ժամանակ զոհ էին մատուցանում: Հա-
րուստները տանում էին մի գառը, իսկ
աղքատները մի զոյգ աղանի կամ տատրակ:

Որովհետեւ Յովսէփին ու Մարիամը
աղքատ էին, այդ պատճառով նոքա գառան
փոխարէն տարան իրանց հետ մի զոյգ ա-
ղանի:

Յովակին ու Մարիամը Փրկչին տարան Երուսաղէմի տաճարը և իրանց նուէրը տուին քահանային. Նա օրհնեց մանուկ Յիսուսին և ընդունեց զոհը:



Այնտեղ կար մի ծերունի մարդ, որի անունը Սիմէօն էր: Սուրբ Հոգին սորան յայտնել էր, թէ սա չը պէտքէ մեռնի, մինչև որ խոստացած Փրկչին (Մեսիային) չտեսնէ: Այդ ծերունին արդէն գիտէր, որ այդ ժամանակ Փրկիչը պէտքէ

գայ տաճարը։ Երբ ծնողները մանուկ Յիսուսին Երուսաղէմ տարան՝ Սիմէօնը գրկեց նորան, փառք տուեց Աստծուն և ասաց. «այժմ արձակիր քո ծառայիդ խաղաղութիւնով, Տէր, թող մեռնեմ, որովհետեւ իմ աչքերը տեսան Քո փրկութիւնը, որ Դու պատրաստել ես ամեն ազգերի համար. ես տեսայ այն լոյսը, որ պէտք է լուսաւորէ հեթանոսներին. ես տեսայ Քո ժողովրդի փառքը»։ Յովսէփին ու Մարիամը զարմացած մնացել էին այս լսածների վերայ։ Սիմէօն ծերունին Մարիամին ու Յովսէփին էլ օրհնեց։

Այնտեղ մէկ կին էլ կար, որի անունը Աննա էր. նա 84 տարեկան էր. նորա մարդը մեռել էլ շատ առաջ և այնուհետեւ իւր բոլոր կեանքը անց էր կացնում տաճարում. պաս էր պահում, աղօթք էր անում, բարի գործքեր էր կատարում և շարունակ ծառայում էր տաճարին։ Աստուած նորան շնորհք էր տուել գալիք բաները իմանալու. նա մարգարէուհի էր։ Նաոր տեսաւ Յիսուսին, ճանաչեց

Նորան ու սկսեց ամենքին ասել, թէ արդէն
աշխարհը է եկել Փրկիչը, որին ամենքը
սպասում էին:

Երբ Յովսէփին ու Արքամը ամեն
բան կատարեցին Տիրոջ օրէնքին համաձայն՝
յետ դարձան իրանց քաղաքը Նազա-
րէթ, որ գտնվում էր Գալիլիայում:

Այս տօնը մենք կատարում ենք ամեն
տարի Փետրվար ամսի 14-ին և կոչվում է
Տեառնընդառաջ: Հին ժամանակը սո-
վորութիւն կար, որ այդ տօնին կրակ էին
վառում եկեղեցու գաւթում, իսկ այժմ
եկեղեցում վառում ենք ջահեր և ամեն
մարդ մէկ մէկ վառած մոմ եկեղեցուց
տանում է տուն:

ՃԱ.

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

(Մատ. գ. 18—17. Մարկ. Ա. 9—13. Ղուկ. գ. 21—23.)

1. Հրէաստանի մէջ ապրում էին երկու բարեպաշտ մարդիկ՝ Զաքարիան և նորա կին Եղիսաբէդը. նոքա մի որդի ու նեցան, որի անունը Յովհաննէս դրէն:

Յովհաննէսը փոքր հասակից անապատը քաշուեցաւ և այնտեղ էր ապրում: Անապատում ոչ մի տուն չկայ մարդկանց բնակութեան համար. այլ և ոչ մի ծաղիկ չէ կանաչում այնտեղ. տեղ տեղ միայն քանի մի ծառ է երեսում: Այն անապատի միջով անցնում էր մի մեծ գետ Յորդանան անունով:

Յովհաննէսը գեղեցիկ շորեր չունէր

հաղին. Նորա վերարկուն ուղտի բրդից էր շնած. կոպիտ էր և գեղեցիկ չէր. իսկ մէջքին կապած ունէր փոքրիկ կաշուէ գօտի. Նա ուտում էր այնպիսի կերակուրներ, ինչ որ առհասարակ աղքատ մարդիկ են ուտում. օրինակ մարախ և վայրենի մեղք. զինի և օղի չէր խմում նա: Յովհաննէսը սիրով կատարում էր այն ամենը, ինչ որ Աստուած էր կամենում:

Աստուած Յովհաննէսին ասել էր. գնան անսապատը և քեզ մօտ եկող մարդկանց ասա. — Խոստովանեցէք, որ դուք շատ չարութիւններ էր արել և խօսք տուէք, որ այսուչետեւ բարի մարդիկ կը դառնաք: Այդ ժամանակ Փրկիչը այլ ևս մանուկ չէր. Նա արդէն երեսուն տարեկան էր: Նա կամենում էր ամենըին բարի և ազնիւ մարդիկ դարձնել: Շատ մարդիկ խոստովանում էին իրանց շար գործերը: Յովհաննէսը շատ էր ցաւում, որ մարդիկ այդ տեսակ չարութիւններ են արել. և նոքա խոստանում էին, որ իրանց կուղենն: Նոքա սըրտանց ցանկանում էին Փրկչին տեսնել, որը

նոցա բարի և ազնիւ մարդիկ պէտք է
դարձնէր։ Այդպիսի մարդկանց մկրտում էր
Յովհաննէսը Յորդանանում։

2. Յիսուսն էլ Գալիլիայից Յորդա-
նան գնաց Յովհաննէսից մկրտուելու։ Ա-
ռաջ Յովհաննէսը չէր ուզում նորան մկրտել,
որովհետև գիտէր, որ Քրիստոսը ոչինչ
յանցանք չունէր։ Քրիստոսը միւս մարդ-
կանց պէս չէր կարող ասել թէ. — ես կա-
մենում եմ ինձ ուղղել, բարի և ազնիւ
մարդ դառնալ, որովհետև նա արդէն
սուրբ էր և արդար։ Դորա համար Յովհան-
նէսը ասաց նորան-«Ես պէտքէ քեզանից
մկրտուեմ, դու ես ինձ մօտ գալիս»։ բայց
Քրիստոս պատասխանեց. թող այդ խօս-
քերը, դու միայն ինձ մկրտիր, ես կամենում եմ
կատարել այն ամենը, ինչ որ Աստուած
սահմանել է մարդկանց փրկութեան հա-
մար։ Յովհաննէսը հնազանդուեցաւ Փրկչին
և մկրտեցնորան Յորդանանի մէջ. և որովհետև
Յովհաննէսը մկրտեց Քրիստոսին, դորա հա-
մար էլ նորան ասում են Յովհաննէս Մկրտ իչ։



Յիսուսը արդէն կանգնած էր Յորդանանի մէջ. ձեռքերը կրծքին էր դրել, իսկ զլուկաը քաշ դցել. նա աղօթում էր: Փրկիչը շրջապատուած էր լուսով: Երբ նա աղօթում էր՝ երկինքը բացուեցաւ. Յովհաննէսը տեսաւ, որ Աստուծոյ Հոգին աղաւնու կերպարանքով իջնում էր Նորա վերայ և լսեց, թէ ինչպէս երկնքից Աստուծած ասում էր. «Դա է իմ սիրելի Որդին, որին ես հաւանեցի»:

Քրիստոսի մկրտութիւնը, այն է
Ձրօրհնէքը, մենք տօնում ենք Ծննդեան
հետ միասին յունվար ամսի Յ-ին. այդ
օրը Հոգևորականները իբրև յիշատակ
Քրիստոսի մկրտութեան՝ եկեղեցական հան-
դիսով ժողովրդի հետ գնում են գետը,
ուր Խաչը ջուրն են զցում և Խաչով, Աւե-
տարանով ու Սուրբ Մեռոնով օրհնում են
ջուրը և ասում են այս տաղը.

Այսօր ձայնն հայրական յերկ-
նից իջեալ հաճոյական, սիրեցելոյ
Որդոյ վկայ.— այ յորդորէ, գետ
յորդորէ, գետ Յորդանան. յոր-
դորական ձայնիւ երգէր մեծ Կա-
րապետն Յովհաննէս:

Այսօր եկեալ Աստուածորդին
՚ի Յորդանան խոնարհութեամբ,
ջրով մկրտիլ ՚ի Յովհաննէ

Այսօր Մկրտիչն Յովհաննէս
՚ի մկրտիլն հրաժարէր, թէ ինձ
պարտէ ՚ի քէն մկրտիլ

Այսօր գոչէր քաղցր ձայնիւ

Աստուածորդին Կարապետին՝ պար-
տէր զօրէնսն կատարել

ԺԲ.

ՅԻՍՈՒՍԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ, ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ, ԶԱՐ-
ՉԱՐԱՆՔԸ ԵՒ ԹԱՂՈՒՄԸ.

1. Յիսուս իւր քարոզներով յայտնում
էր մարդկանց թէ ինքն է Աստուծոյ Որ-
դին, և ուղարկուած է Նորանից՝ մարդկանց
փրկութեան ճանապարհը ցոյց տալու հա-
մար. Նա ասումէր՝ մեր երկնաւոր Հայրը
սուրբ է, գլժած է, բարի է. Նա սիրում է
մեղ աւելի քան մի հայր իւր հարազատ
որդուն. ուրեմն մենք ևս պէտք է սրտով
և հոգւով սիրենք մեր երկնաւոր Հօրը՝
Նորա կամքը կատարելով, այն է պէտք է
լինինք բարի, արդար, ճշմարիտ և գլժած
դէսի մեր ընկերները:


Նա ասումէր.—ով այս իմ խրատները
կ'կատարէ, նա է իմ Հօր սիրելի որդին և

ժառանգ արքայութեան։ Յիսուս ինչ որ
քարոզում էր խօսքով, նոյնը կատա-
րում էր և գործով։ — Նա բարի էր,
սիրում էր մանուկներին, մեծերին, արդարնե-
րին և մեղաւորներին, Նա խղճում, ողորմում
և բարութիւններ էր անում այն ամեն
մարդկանց, որոնք հաստատ հաւատով և
յուսով իրան էին դիմում։

Նա բժշկում էր հիւանդներին, դիւա-
հարներին, կաղերին, կոյրերին, անդամա-
լոյներին և յարութիւն էր տալիս մե-
ռելներին։ Յիսուսի այս ամեն բարերարու-
թիւնները և Աստուածային նշանները աեսնե-
լով օրէցօր շատանում էր Նորա աստուա-
ծութեանը հաւատացողների և Նորա
խրատները պահողների թիւը։


2. Բարի մարդիկ առհասարակ ունե-
նում են աշխարհիս վերայ իրանց չար
թնամիքը. մեր բարի Փրկիչն ևս ունե-
ցաւ իւր չար թնամիքը։ Առքա էին Տրէից
դպիրները (կարդացողները), քահանաները,
քահանայապետները և սոցա հետևողները։

Սոքա՝ դրաից աստուածապաշտ ձեւացող՝ և
գործքով կեղծաւոր, ազա՛, խաբեբայ մար-
դիկ էին, որոնց այս պակասութիւնները



Յիսուսը իւր աներկիւդ ճշմարտախօսու-
թիւնով հրապարակ էր հանում ամեն տեղ
և խայտառակում։

Յիսուսի այս ընթացքը ձեռնաու-
չինելով այս մարդկանցը՝ թշնամացան
Նորա հետ և Նորան սուտ վր-
կաներով դատապարտեցին դատաւորների



առաջ՝ որպէս յանցաւոր, և շատ տեսակ
չարչարանքներ տալուց յետոյ մեռցրին խա-
չի վերայ:

3. Երկու հարուսա և բարի մար-
դիկ, Յովսէփ Արեմաթացին և Նիկողիմոսը
հաստատ հաւատում էին Յիսուսի աստուա-

ծութեանը, նորա վեր առան Յիսուսի
մարմինը խաչի վրայից և թաղեցին քա-
րից փորուած մի գերեզմանի մէջ և մի
մեծ սալաբար դրին գերեզմանի բերնին:
Յիսուսը իւր մահուանից առաջ ասել էր
թէ երեք օրից յետոյ պէտք է յարութիւն
առնեմ. հրէաները այս խօսքին չէին հա-
սատում, այլ կարծում էին թէ Յիսուսի
աշակերտները զիշերը կ'զան, կ'զողանան
Նորա մարմինը և ամեն տեղ կհրատարա-
կեն թէ յարութիւն է առել. և այս պատ-
ճառով հրէից քահանայ սպաները կնքեցին
Յիսուսի գերեզմանի դուռը և կարգել
տուին զինուորներ, որ պահպանեն գե-
րեզմանը:

ՃԳ.

ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ.

(Մատթ. իւ. Մարկ. ժզ. Ղուկ. իդ. Յով. իւ.)

1. Թաղման երրորդ օրը առաւօտեան
վաղ արեւի ծագելուց առաջ երկիրն սկսեց

դողալ և շարժուիլ։ Աստուծոյ հրեշտակը
իջաւ երկնքից։ Հրեշտակի նստած տեղը
կայծակի նման լուսաւորուեցաւ։ Հրեշտակի
շորերը սպիտակ էին և այնքան սպիտակ,
որ կարծես թէ ձիւն լինէր։

Սյդ հրեշտակը գերեզմանի բերա-
նի քարը վերցրեց և նստեց նորա վերայ.
երբ գետինը շարժուեց և լոյս եղաւ,
զինուորները այնպէս վախեցան, որ կիսա-
մեռ վայր ընկան գետին։ Խսկ յետոյ նոքա
այդ բանը 'ի հարկէ յիշում էին։ Վերջապէս
երկիւղը հետզհետէ աւելացաւ նոցա մէջ,
այնպէս որ թողին ու փախան։ Փրկիչը
յարութիւն է առնում գերեզմանից և այնտեղ
թողնում է կտաւը։ Սյլ ևս ոչ ոք չը մնաց
բացի հրեշտակից, որ նստած էր քարի վե-
րայ։

Ահա այդ միջոցին եկան այդտեղ
երեք կանայք. նոցա անուններն էին՝ Մա-
րիամ Մագդաղինացի, Մարիամ Յակով-
բայ և Սաղովմէ։ Նոքա շատ էին սիրում
Փրկչին. և կամենում էին նորա մահուա-
նից յետոյ էլ իրանց սէրը ցոյց տալ։ Դո-

ըա համար էլ գնել էին խունկ և իւղ, որ
օծեն Փրկչի մարմինը։ Այսպէս էր Հրէից
սովորութիւնը. ով մէկին սիրում էր՝ նորա
մահուանից յետոյ օծում էր նորա մարմինը։

Եւ այսպէս կանայք առաւօտեան վաղ
եկան. արեգակը դեռ չէր ծագել, ճանա-
պարհներին ոչ ոք չը կար դեռ. նոցա ոչ
ոք չը հանդիպեց. նոքա դիտմամբ այսպէս
վաղ էին եկել, որ ոչ ոք չը խանգարէ իրանց.
Նոքա խիստ տիսուր էին. կանգնած էին
մեծ քարի մօտ, որ ծածկում էր գերեզմա-
նի դուռը և մտածում էին. դիտէին որ քա-
րը մեծ է և ծանր, որովհետեւ թաղման
ժամանակը տեսել էին, թէ որպիսի մեծ
քար դրին գերեզմանի բերնին. նոքա շատ
էին մտածում, թէ ով պէտք է քարը թա-
ւալեցնէր. զինուորների վերայ նոքա չէին էլ
մտածում, որովհետեւ նոցա յայտնի չէր, թէ
Յիսուսի գերեզմանը հսկում էին։ Երբ նոքա
մտածում էին թէ ինչ անեն, նայեցին
գերեզմանին և տեսան քարը գլորած.
Հրեշտակին դեռ չէին տեսնում։ Մարիամ
Մագդաղինացին վազում է իսկոյն և պատ-

մում է աշակերտներին և Պետրոսին, լաց է լինում, կանչում է ու ասում.—Տիրոջը գերեզմանից հանել են և չը դիտեմ թէ որտեղ են դրել:



Միւս երկու կանայք գնում են դէպի գերեզմանը, ներս են մտնում և Տի-

ըո՞ջ մարմինը այնտեղ չեն գտնում: Գերեզմանում չորս կողմը նայելուց յետոյ խիստ տիսրեցին, որ չդժան Փրկչի մարմինը. նոքա տեսան երկու մարդ, ձիւնի նման սպիտակ և երկայն փայլուն շորերով, որոնք նստած էին այնտեղ: Գերեզմանը լուսաւորուած էր. կանայք զարհութեցան, լուսափայլ մարդկանց չկարողացան նայել և ընկան գետնի վերայ:

2. Այդ երկու մարդկանցից մինը՝ որ հրեշտակ էր, գիտէր, թէ կանայք ումն էին որոնում. ուստի և ասաց. մի՛ վախենաք, գիտեմ, որ Յիսուս Նազովրեցուն էք խընդրում, կենդանուն մեռելների մէջ ինչո՞ւ էք փնտուում, եկէք և տեսէք ուր որ Նորան դրել են. և յետոյ գնացէք ասացէք աշակերտներին և Պետրոսին, թէ Քրիստոսը յարութիւն է առել և կենդանի է: Հըրեշտակը յիշեցրեց նոցա, ինչ որ Փրկիչն ասել էր, թէ պէտք է խաչուեմ, թաղուեմ, և երրորդ օրը յարութիւն առնեմ: Կանայք խսկոյն յիշեցին Փրկչի խօսքե-

ըր, որ տրտմութիւնից մոռացել էին: Նոքա
շտապեցին աշակերտներին իմաց տալու, որ
սրանք էլ ուրախանան այս բանի վերայ:
Իսկ իրանց պատահողներին ոչինչ չասացին,
որովհետեւ խիստ վախենում էին:

Փրկիչը ճանապարհին պատահեց
նոցա. նոքա նայեցին նորան և ուրախացան
իսկ Մարիամ Մագդաղինացին կրկին դար-
ձաւ գերեզմանը և լաց էր լինում. այն
ժամանակ Քրիստոս դուրս եկաւ նորա ա-
ռաջ. Մարիամն ընկաւ նորա ոտները, լաց
էր լինում և ազօթում. նա առաջինը
տեսաւ Փրկչին նախ քան միւս կանանց
պատահելլ:

Այս բանը պատահեց Զատկի
կիւրակէին. դորա համար էլ այդ օրն ենք
տօնում Քրիստոսի յարութիւնը. այդ տօ-
նին մենք յիշում ենք, որ Փրկիչը խաչուեց,
թաղուեց և մահուանից երրորդ օրը յա-
րութիւն առաւ և երգում ենք այս երգը.
Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց,

մահուամբ զմաշ կոխեաց և յարութեամբ իւրով մեղ զկեանս պարզեաց. նմա փառք յաւիտեանս ամէն:

ՃԴ.

ՔՐԻՍՏՈՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

(Մարկ. 4:19. Ղուկ. 17: 49—50. Գործք առաքելոց)

ա. 1—14)

Քրիստոս իւր յարութիւնից յետոյ բառասուն օր էլի մնաց երկրիս վերայ. այդ քառասուն օրուայ ընթացքում շատ անդամ երևեցաւ իւրաշակերտներին և ուրիշ բարեպաշտ մարդկանցը և ցոյց տուեց դոցա, որ ինքը մեռած չէ, այլ կենդանի է: Աշակերտները բոլորն էլ տխուր էին, երբ Քրիստոս խաչի վերայ մեռաւ. իսկ այժմ ուրախանում են, որ նա կրկին կենդանի է:

Երբ յարուցեալ Փրկիչը աշակերտների մօտ էր գալիս, սովորաբար կարճ ժամանակ էր մնում նոցա մօտ. մի անդամ էլ յանկարծ անյայտացաւ նոցա աչքից:

Քանի որ նոցա մօտ էր, շատ բաներ ասաց
նոցա. Նա ասում էր, թէ շուառվ Աստու-
ծոյ մօտ պէտք է գնայ, թէ նոցա այլ ևս
տեսնելու չէ:

Մի անգամ Յիսուս իւր բոլոր
աշակերտներին հաւաքեց մի սարի վերայ և
ասաց նոցա. Երկնքում և երկրի վերայ ա-
մենայն իշխանութիւն տուած է ինձ. ինչ-
պէս ինձ ուղարկեց հայրը, այնպէս էլ ես
ձեզ եմ ուղարկում. ուստի գնացէք այսու-
հետեւ և բոլոր հեթանոսներին քարոզեցէք
և մղրտեցէք նոցա Հօր, Որդույ, և Սուրբ
Հոգու անունով: Սովորցրէք նոցա այն
բոլորը, ինչ ես պատուիրել եմ ձեզ:

Եւ ահա Տէրը կանգնած էր իւր ա-
շակերտների հետ Զիթենեաց սարի գլխին.
Նոքա եկել էին Երուսաղէմից և բարձրա-
ցել էին այստեղ: Երուսաղէմը շատ մօտիկ
է Զիթենեաց սարին: Քրիստոս իւր տասն-
երկու առաքեալների հետ այս լեռան վերայ
խօսեց ու ասաց.—սպասեցէք Երուսաղէմում
մինչեւ որ կուղարկեմ ձեզ մօտ միիթարող
Սուրբ Հոգին, ինչպէս որ խոստացել եմ:

Այս որ ասաց՝ բարձրացրեց ձեռքերը և
օրհնեց նոցա և համբարձաւ երկինք, ամպը
ծածկեց Փրկչին նոցա աչքերից, այնպէս որ
այլ ևս չը տեսան նորան:



Աշակերտները խիստ զարմացան և
ապշած երկինք էին նայում Տիրոջ ետևից.
ահա երևեցան նոցա երկու մարդ սպիտակ

շորերով, որոնք կանգնած էին նոցա մօտ
և ասում էին. ինչ էք կանգնել այստեղ
և երկինք նայում. այս Յիսուսը, որ ձեզա-
նից հեռացաւ ու երկինք բարձրացաւ՝ կը-
կին կըգայ. Աշակերտները այս բանի վերայ-
շատ ուրախացան և աղօթեցին. և Զի-
թենեաց սարից յետ դարձան Երուսաղէմ,
ինչպէս Քրիստոսը նոցա հրամայել էր: Բայց
նոքա այլ ևս տխուր չէին, որ Փրկիչը նո-
ցա մօտ չէր. նոքա այժմ շատ էին ուրա-
խանում. միշտ տաճարումն էին, գովաբա-
նում և օրհնում էին Աստուծուն:

Այս տօնը մենք կատարում ենք
Զատկի տօնից բառասուն օր անց և
կոչվում է Համբարձումն:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԳՈԼՈՒԾԸ

(Գործք առաքելոց դւ. բ.)

Փրկիչն այլ ևս իւր աշակերտների
մօտ չէր, որ Նորան տեսնել կարողանային. Նա
համբարձել էր երկինք. բայց երբ Նա դեռ
աշակերտների մօտ էր, բարոզում էր նոցա
և ասում էր, թէ երբ Ես ձեզնից կը հե-
ռանամ, Առւրբ Հոգին երկնքից կուղարկեմ,
Նա միշտ ձեզ մօտ կը լինի և կը մխիթա-
րէ ձեզ. մնացէք Երուսաղէմում մինչև
Առւրբ Հոգին կընդունէք:

Այսպէս էլ կատարեցին աշակերտ-
ները. Նոքա մնացին Երուսաղէմում, վերնա-
տանը աղօթում էին Աստուծոյ և սպասում
էին Առւրբ Հոգուն: Աշակերտները տասն
օր էր ինչ որ սպասում էին. արդէն մօտե-
ցել էր այն օրը, երբ Նոքա պէտքէ ընդու-

Նէին Փրկչի խոստացած մխիթարիչ սուրբ Հոգին: Հոգեգալստեան նոքա հաւաքուած էին վերնատանը. նոցա մօտ դրած էին գրքեր, որոնք խօսում էին Աստուծոյ մասին. այդ գրքերը Սուրբ Գիրքն են, որ աշակերտները յաճախ կարդում էին. առաջուան գրքերը մեր գրքերի նման չէին. այլ փաթաթած էին: Աշակերտները շատ սիրով էին միմե-



անց հետ. կռիւ, անբաւականութիւն չունէին. ինչ ասել, որ նոքա աղօթէին Աստուծոյ,

որ շուտ ուղարկէ Սուրբ Հոգին:

Եւ ահա յանկարծ մի խիստ քամի բարձրացաւ. այն տանը, ուր նստած էին աշակերտները, իջաւ Հոգին Սուրբը և հրեղէն լեզուների բաժանուելով նստաւ նոցանից ամեն մէկի վերայ և ամենքը լցուեցան Սուրբ Հոգւով:

Աշակերտները աղօթում էին Աստուծոյ և չնորհակալութիւն յայտնում Նորան, որ Փրկիչ ուղարկեց իրանց համար և Որը նոցա համար մեռաւ. նոքա աղօթում էին և Փրկչին, Որ իւր անձը զոհեց նոցա համար:

Մեզանից չեռու երկիրներում բը նակվում են ուրիշ մարդիկ, որոնք խօսում են օտար լեզուներով. նոցա խօսածները մենք չենք կարող հասկանալ: Երուսաղէմից չեռու էլ կենում էին մարդիկ, որոց լեզուները աշակերտները չը գիտէին: Այդ օտար երկիրների մարդկերանցից շատերը եկել էին Երուսաղէմ հոգեգալստեանը. Երբ աշակերտները Հոգւոյն Սրբոյ չնորհն ստացան, սկսեցին այդ օտար մարդկանց լեզուներով էլ խօսել.


լսողները զարմանում և ասում էին միմեանց.
չէ՞ որ սղքա ամենկը գալի եացիներ են. սղքա
ի՞նչ տեղից գիտեն մեր լեզուն, քանի որ
սղքա չեն սովորել մեր լեզուները. ոմանք էլ
ասում էին թէ հարբել են և անկապ անկապ
խօսում են:

Այն ժամանակ Յիսուսի աշակերտ-
ներից Պետրոսը վերկացաւ տեղից. սկսեց
խօսել և ասել.—Հրէաստանի բնակիչներ
և դուք որ Երուսաղէմումն էք բնակվում,
լսեցէք. մենք հարբած չենք, ինչպէս դուք
կարծում էք. մենք խօսում ենք մեր Փրկչի
ուղարկած Սուրբ Հոգոյ շնորհաց լեզու-
ներով: Աշակերտները մարդկանց քարոզում
էին Փրկչի մասին. Նորա ասում էին, որ
Քրիստոս նոցա համար է մեռել, որ Նա
յարութիւն է առել և համբարձել, որ
Փրկիչը նոցա հիմայ էլ սիրում է և ցան-
կանում է երջանիկ անել: Երբ այս բանը
լսեցին մարդիք՝ հաւատացին առաքեալների
խօսքին. այդ օրը մօտ երեք հազար մարդ հա-
ւատաց, որոնք մկրտուեցան և դարձան բարե-
պաշտ մարդիկ:

Այս տօնը մենք կատարում ենք
Քրիստոսի համբարձումից տասներորդ օրը
և կոչվում է Հոգեգալուստ—Պենտեկոստէ:

ՃԶ.

ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ



1. Մեր Տէր Յիսուս Քրիստոսի
խաչելութիւնից յետոյ Նորա Սուրբ Խա-
չը երկու աւաղակների խաչերի հետ միա-
սին ընկած էր Գողգոթա սարի գլխին, ուր
որ նոցա խաչեցին: Հաւատացեալները միշտ
գնում էին երկրպագելու նորան. Հրէաները
որպէս զի չը թողնեն նոցա պաշտելու Սուրբ

Խաչը՝ երեք խաչերը միասին տարան ձգեցին
Քրիստոսի գերեզմանի այրը և բերանը ծած-
կեցին քարով և հողով:

Կղողէս կայսեր կին Պատրոնիկէ
թագուհին, որ Քրիստոսի հաւատացող էր
գտաւ Սուրբ Խաչը առաջին դարում և Յա-
կովը Տեառնեղբայրը բարձրացնելով
Սուրբ Խաչը ասաց այս երգը.

Խաչի քո, Քրիստոս, երկիրապա-
գանեմք, և զթաղումն քո մեծա-
ցուցանեմք, և զսուրբ յարութիւնդ
քո, փառաւորեմք. եկայք հաւատա-
ցեալք երկրապեսցուք Քրիստոսի
Աստուծոյ մերոյ. վասն զի եկն ՚ի
ձեռն Խաչին իւրոյ շնորհեաց պարզես
աշխարհի, սուրբ Աստուծ, սուրբ
և հզօր, սուրբ և անմահ, որ յարեար
՚ի մեռելոց, ողորմեած մեզ:

Այս տեղից սկսած հաւատացեալները
սկսեցին Սուրբ Խաչի Վերացման տօն կա-
տարել ամեն տարի:

2. Նատ տարիներ անցնելուց յետոյ հեթանոսները որպէս զի արգելեն բրիստոնեաներին Գողգոթա գնալ և Քրիստոսի գերեզմանին երկրպագութիւն տալ՝ շինեցին այնտեղ կռատուն։ Կոստանդիանոս թագաւորի մայր Հեղինէ թագուհին Քրիստոսից 327 տարի անց քանդել տալով այդ կռատունը՝ գտաւ Փրկչի գերեզմանը և սուրբ Խաչափայտը։

Երուսաղէմի Մակարիոս պատրիարքը մեծ հանդիսով բարձրացրեց Սուրբ Խաչը ժողովրդին ցոյց տալու և ամենը երկրպագութիւն տուին նորան. և այդ տեղից ստացաւ Խաչվերաց անունը։

Խաչվերացի տօնը մենք կատարում ենք սեպտեմբեր ամսին։

3. Քրիստոսի Սուրբ Խաչը փառաւոր ամանի մէջ դրուած պահպում էր Գողգոթա սարի վերայ շինուած մեծ եկեղեցու մէջ և հաւատացեալները գնում էին երկրպագութիւն անելու նորան։

Քրիստոսից 614 տարի յետոյ Պարսից
Խոսրով թագաւորը Երուսաղէմ քաղաքը
առաւ ու կողոպտեց. գերի տարաւ շատ
քրիստոնեաներ և նոցա հետ Երուսաղէմի
Զաքարիա պատրիարքին. Քրիստոսի Սուրբ
Խաչն էլ եկեղեցուց վերջնելով տարաւ իւր
տէրութեան մայրաքաղաքը՝ Դաւրէժ և դրաւ
թագաւորական գանձարանում:

Սա մէկ պատիժ էր, որ Աստուած
տուեց քրիստոնեաներին իրանց մեղքի հա-
մար: Բայց Աստուած ներող է. ինչպէս
գիտէ պատժել, այնպէս էլ ողորմում է ի-
րան հաւատացողներին: Այդ ժամանակ
Յունաստանում թագաւորում էր Հե-
րակլը. Աստուած տուեց նորան քաջութիւն,
այնպէս որ Պարսից թագաւորը խոնարհե-
ցաւ նորա առաջ և ուզեցաւ հաշտուիլ
Հերակլի հետ: Հաշտութեան պայմաննե-
րից մէկն էլ այն էր, որ պարսիկները Քրիս-
տոսի Սուրբ Խաչը պէտք է յետ դարձ-
նէին. այդպէս էլ եղաւ. Պարսից թագաւո-
րը Սուրբ Խաչը իւր փառաւոր ամանովը
յետ դարձրեց: Գերի տարուած քրիստոնեա-

ներն էլ աղասուեցան և յետ դարձան Երուսաղէմի Զաքարիա պատրիարքի հետ միասին։ Այս պատճառով Հերակլ կայսրն էլ Երուսաղէմ գնաց և մեծ հանդէս կատարելով՝ վեր առաւ Սուրբ Խաչը և Նորից տարաւ դրեց Գողգոթա սարի գլխին շենուած եկեղեցու մէջ։

Այս բանը պատահեցաւ Քրիստոսից 629 տարի յետոյ սեպտեմբեր ամսի 14.-ին։ Այսպատճառով էլ մեր եկեղեցին այդ տօնը կատարում է սեպտեմբեր ամսին։

Ճէ.

ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ԳՏՆԵԼԸ
ԳԻՒՑ - ԽԱՉ,

1. Յիսուս Քրիստոսի երկինքը համբառնալուց յետոյ՝ հրէաները իրանց պատիժը ստացան, կռապաշտ հռովմայեցիները եկան և հրէաներին չարչարեցին ու գերի տարան։ Բայց որովհետեւ հրէաները Քրիստոսի դէմ ատելութիւն ունեին,

այդ պատճառով էր Քրիստոսի գերեզմանի
տեղը Խաչափայտի հետ մէկտեղ հողի
տակ էին թաղել։ Մի քանի տարուց յե-
տոյ հեթանոսներն էլ Յիսուսի գերեզմանի
փոսը հողով լքցրին և նորա վերայ տա-
ճար շինելով՝ կուռք դրին այնտեղ։ Որովհե-
տեւ խեղճ քրիստոնեաները շարունակ նե-
ղովթիւն էին կրում թէ հրէաներից և թէ
հեթանոսներից, այդ պատճառով չը կարո-
ղացան մէկ հնար գտնել, որ այն տեղը
չապականուի և այն պատուական գանձը
հողի տակ չմնայ։

Երեք հարիւր տարի անցնելուց
յետոյ՝ Աստուած իւր անչափ մարդասիրու-
թիւնով Սուրբ եկեղեցուն խաղաղութիւն
շնորհեց։ Կոստանդիանոս կայսրը քրիստո-
նեայ դարձաւ և հրամայեց Քրիստոսի Սուրբ
Գերեզմանի տեղը սիրուն եկեղեցի շինել.
Կոստանդիանոսի մայր սուրբ Հեղինէ թա-
գուհին էլ գնաց Երուսաղէմ թէ Սուրբ
տեղերը տեսնելու և թէ գլուխ բերելու
այդ եկեղեցու շինովթիւնը։

Երբ որ Հեղինէն Երուսաղէմ հա-

սաւ ուզեցաւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի
խաչափայտը դանել: Այդ պատճառով
Երուսաղեմի ամեն կողմը պարտել տուեց,
բայց ՚ի զուր աեզ. որովհետեւ Հրեաների և
կուտապաշտների ձեռքով Սուրբ տեղերը բո-
լորովին աւերուել էին: յետոյ Հեղինէն
փորել տուեց այնտեղ, ուր որ խաչուած էր
Փրկիչը. Խորը փորելուց յետոյ այնտեղ
գտաւ Փրկչի գերեզմանը և նորա մօտ ե-
րեք խաչ, Յիսուսի ձեռքերի ու ոտների
մեխերը և խաչի գլխի տախտակը, որի վե-
րայ Պիղատոսը գրել էր:


2. Սոցա գանելուց յետոյ Հարկաւոր
էր իմանալ թէ որն էր այն խաչը, որի
վերայ Յիսուս Քրիստոս մեռաւ: Սորա
Ճարն էլ գտան: Երեք խաչերն էլ դիպցրին
բաղարի մէջ նոր մեռած մէկ պատանուն.
Երբ որ երրորդ Խաչը դիպցրին՝ մեռած
պատանին կենդանացաւ ու սկսեց փառք
տալ Աստուծոյ:


Աստուծասէր սուրբ թագուհին
այս պատուական գանձը գտնելով ուրա-

խութիւնով լցուեցաւ և երկրպագութիւն
տուեց Սուրբ Խաչին։ Մի կտոր կտրեց
նորանից, վերցրեց իւր հետ, որ իւր որդուն՝
Կոստանդիանոս թագաւորին տանէ. իսկ
մնացորդի համար արծաթէ գեղեցիկ աման
շինել տուեց թանկագին ակներով զարդա-
րուած և յանձնեց Սուրբ Մակարիոս հայ-
րապետին. իսկ սա դրեց այն հոյակապ
եկեղեցու մէջ, որ Կոստանդիանոս կայսրը
շինել տուեց Գողգոթա սարի գլխին։

Այսպէս ահա գտնուեցաւ Գրիս-
տոսի Սուրբ Խաչափայտը. այս տօնը
մինչև այսօր էլ մեր եկեղեցին կատարում է
Հանդիսով հոկտեմբեր ամսին և այս տօնը
կոչվումէ Գիւտ—Խաչ կամ Խաչ Գիւտ։








Տես
Օրինա

ԴԻՒՑ ՔՈՀԱՆԱՑ ԱՂԱՆԵԱՆԻ
ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ:

1. Հայատարմուրիւնը ամեն արգելքների յադրում թ. 4
և. Ֆրանց Հսթմանի. 1877
2. Խառարից դեպի լոյս. նոյն Հսթմանի. 1877
3. Գօն-Քիջոս Լամանշեցի. Մ. Սկրվանտեսի 1
4. Գեորգ Ռոլիկասոն 1879
5. Երրորդ սովի. առակ և ակիդիկի (պարզեւատրած Ս. Պետերբուրգի Ֆրեօքիւսն ընկերութեան կողմբ). 1879
6. Ռոբինզոն. (հրատարակուրիւն Թիֆլիզի տպագրական ընկերութեան)
7. Չեստերտոնի ճառանձոց պատկերապարզ վեպ. 1882 1
8. Ակտեա. 8. Սիսոեվակ. 1885
9. Նան Երնսոն Սմօլեար. Ն. Նանջուկի. 1885

10. Աղօրատետր. ի պէտս մանկանց Հայատանեայց եկեղեցոյ
11. Կրօնի դասագիրք. Երկրորդ տարուայ ուսումն Հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների համար. Երկրորդ տպագրութիւն 1887
12. Կրօնի դասագիրք. Երրորդ տարուայ ուսումն Հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների համար. 1888



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0022436

A 11
5722